FRIEDRICH EBERT STIFTUNG

EXHEO
Education & Career Development Foundation

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԵԿՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

FRIEDRICH EBERT STIFTUNG

EXHEO
Education & Career Development Foundation

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԵԿՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆԿՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցը մշակվել է «ԷԿՍԵՈ» կրթության և կարիերայի զարգացման հիմնադրամի կողմից՝ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ակադեմիական բարեվարքության մասնակցային և ժողովրդավարական քաղաքականություն» ծրագրի շրջանակում: Այն բաղկացած է երկու հիմնական բաժիններից:

Առաջին բաժնում ներկայացված է մատչելի տեղեկատվություն՝ ինստիտուցիոնալ ինքնավարության, ակադեմիական ազատության, ակադեմիական ազնվության և ակադեմիական բարեվարքության վերաբերյալ՝ հիմնվելով միջազգային միտումների և լավագույն փորձի վրա:

Երկրորդ բաժնում ներկայացված են Ծրագրի շրջանակում բարձրագույն ուսումնական հաստատությունների շահակիցների հանրային ընկալումները:

Աշխատանքային թիմ՝
Միշա Թադևոսյան
Տաթևիկ Ղարիբյան
Քրիստինա Ծատուրյան
Արևիկ Հարությունյան

Ձևավորող՝
Նորա Գալֆայան

Ծրագիրն իրականացվել է Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ և փաստաթղթում առկա կարծիքները կարող են չհամընկնել Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի պաշտոնական տեսակետի հետ:

FRIEDRICH EBERT STIFTUNG

EXHEO Education & Career Development Foundation

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 6

Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից իրենց առաքելության՝ դասավանդման, հետազոտության և հասարակությանը ծառայելու համար իրենց առաջնահերթությունները սահմանելու և ուրույն քաղաքականությունը կիրառելու կարողություն:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 16

Կրթելու և քննարկումներ իրականացնելու, հետազոտական գործունեություն ծավալելու և հետազոտական արդյունքները հրապարակելու, իրենց կարծիքը տվյալ հաստատության կամ համակարգի վերաբերյալ ազատ արտահայտելու, ինստիտուցիոնալ գրաքննությունից զերծ/ազատ լինելու և մասնագիտական կամ ներկայացուցչական ակադեմիական մարմիններում ազատ մասնակցելու հիմնարար իրավունք:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ 26

Անկախ իրավիճակից հիմնարար արժեքների պահպանման պարտավորություն:
Այդ արժեքներն են.
- ազնվություն
- վստահություն
- արդարություն
- հարգանք
- պատասխանատվություն
- խիզախություն

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ 36

Համապատասխանություն էթիկայի և մասնագիտական սկզբունքներին, չափանիշներին, փորձառությանը և արժեքների հետևողական համակարգին, որոնցով առաջնորդվում են կրթության, հետազոտության և գիտության մեջ որոշումներ կայացնելիս:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ 47

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական բարձրագույն կրթության տարածք, 2016

բարձրագույն ուսումնական
հաստատությունների կողմից

- **սեփական առաջնահերթությունների սահմանում**
- **սեփական քաղաքականությունների կիրառում**

իրենց առաքելության՝
դասավանդման, հետազոտության և
հասարակությանը ծառայելու համար

Ինստիտուցիոնալ ինքնավարության ընկալումներն ու ձևակերպումները տարբեր են, ինչպես և բազմազան է այն իրավական դաշտը, որի ներքո գործում են համալսարանները: Այս տարբերությունները պայմանավորված են բուհական համակարգի կառավարման ազգային օրենսդրության, մշակութային և պատմական զարգացման, ինչպես նաև՝ պետական կառավարման առանձնահատկություններով:

ԻՆՉ Է
Ինստիտուցիոնալ ինքնավարությունը

«Որոշումներ կայացնելու լիազորություն դասավանդողների, դասավանդման բովանդակության, որակավորման շնորհման և հետազոտության թեմայի ընտրության վերաբերյալ»:

1965 թ. Համալսարանների ասոցիացիա

«...Ինքնակառավարման այնպիսի աստիճան, որը թույլ է տալիս համալսարաններին կայացնել արդյունավետ որոշումներ՝ իրենց ակադեմիական աշխատանքի, չափանիշների, կառավարման և այլ համապատասխան գործողությունների վերաբերյալ, որոնք համադրելի են հանրային հաշվետվողականության սկզբունքների հետ, և հատկապես, վերաբերում են պետական ֆինանսավորմանը, ակադեմիական ազատություններին և մարդու իրավունքներին»:

ՅՈՒՆԵՍԿՕ, Համալսարանների դասավանդող անձնակազմի կարգավիճակի վերաբերյալ երաշխավորություններ[1]

«Պետության և համալսարանների միջև մշտապես փոփոխվող հարաբերություններ և ենթադրում է պետական մարմինների կողմից համալսարանների նկատմամբ իրականացվող տարբեր աստիճանի վերահսկողություն, որը կախված է ազգային կոնկրետ համատեքստից և հանգամանքներից»:

Եվրոպական համալսարանների ասոցիացիա (ԵՀԱ)[1]

ԵՀԱ-ն սահմանում է ինստիտուցիոնալ ինքնավարության չորս հիմնական ուղղություններ, որոնցով և իրականացվում է համալսարանների ինքնավարության գնահատումն ըստ բաղադրիչների [2].

1.

Կազմակերպչական ինքնավարություն
ներքին կազմակերպական կանոնակարգումների իրացման և դրանց վերաբերյալ անկախ որոշումների կայացման կարողություն

2.

Ֆինանսական ինքնավարություն
բուհի կողմից իր ֆինանսական միջոցների կառավարման վերաբերյալ որոշումներ ընդունելու կարողություն

3.

Մարդկային ռեսուրսների կառավարման ինքնավարություն
բուհի կողմից դասախոսական և վարչական անձնակազմի հավաքագրման և կառավարման կարողություն

4.

Ակադեմիական ինքնավարություն
ներքին ակադեմիական գործընթացներն անկախ կառավարելու կարողություն՝ ներառյալ ուսանողների ընդունելությունը, ակադեմիական բովանդակությունը, որակի ապահովումը, աստիճանաշնորհող կրթական նոր ծրագրերի ստեղծումը և դասավանդման լեզուն

1. Կազմակերպական հարցեր

1.1 գործադիր ղեկավարի ընտրության կարգ

1.2 գործադիր ղեկավարի ընտրության չափանիշներ

1.3 գործադիր ղեկավարի հեռացում

1.4 գործադիր ղեկավարի պաշտոնավարման ժամկետ

1.5 արտաքին անդամների ներգրավումն ու ընտրությունը կառավարման մարմիններում

1.6 ակադեմիական մարմինների վերաբերյալ որոշում կայացնելու կարողություն

1.7 իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մարմիններ հիմնելու կարողություն

2. Ֆինանսական ինքնավարություն

2.1 պետական ֆինանսավորման տևողություն

2.2 պետական ֆինանսավորման ձև

2.3 վարկային միջոցներ ներգրավելու կարողություն

2.4 խնայողությունները պահպանելու կարողություն

2.5 սեփականության իրավունքով շենքերը տնօրինելու կարողություն

2.6 ուսանողներից ուսման վճարները գանձելու իրավասություն (բակալավրիական, մագիստրոսական և ասպիրանտական կրթության մակարդակներում)

2.7 միջազգային ուսանողներից ուսման վճարները գանձելու կարողություն (բակալավրիական, մագիստրոսական և ասպիրանտական կրթության մակարդակներում)

3. Տարկային ռեսուրսների կառավարման ինքնավարություն

3.1 բարձր ակադեմիական պաշտոն զբաղեցնող դասախոսների աշխատանքի ընդունման կարգերը սահմանելու կարողություն

3.2 բարձր վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակիցների ընդունման կարգերը սահմանելու կարողություն

3.3 բարձր ակադեմիական պաշտողն զբաղեցնող դասախոսների աշխատավարձերը որոշելու կարողություն

3.4 բարձր վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակիցների աշխատավարձերը որոշելու կարողություն

3.5 բարձր ակադեմիական պաշտոն զբաղեցնող դասախոսներին հեռացնելու կարողություն

3.6 բարձր վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակիցներին հեռացնելու կարողություն

3.7 բարձր ակադեմիական պաշտոն զբաղեցնող դասախոսների առաջխաղացման կարգը սահմանելու կարողություն

3.8 բարձր վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակիցների առաջխաղացման կարգը սահմանելու իրավասություն

4. Ակադեմիական ինքնավարություն

4.1 ուսանողների ընդհանուր թվաքանակը որոշելու իրավասություն

4.2 բակալավրիական և մագիստրոսական կրթական ծրագրերում ուսանողների ընդունելության կարգը սահմանելու կարողություն

4.3 բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտական կրթական ծրագրեր ներդնելու կարողություն

4.4 կրթական ծրագրերը դադարեցնելու կարողություն

4.5 բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի դասավանդման լեզուն որոշելու կարողություն

4.6 որակի ապահովման մեխանիզմներն ու գործակալություններին ընտրելու կարողություն

4.7 աստիճան շնորհող կրթական ծրագրերի բովանդակությունը սահմանելու կարողություն

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՏԱՐԲԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՑ

Ըստ ԵՀԱ-ի մշակած սանդղակի՝ 2017 թվականին ԵՀԱ-ն իրականացրել է 29 եվրոպական երկրների բարձրագույն կրթության համակարգերի գնահատում: Այն դուրս է բերել մի շարք հետաքրքիր միտումներ չորս տիրույթներում:

Եվրոպայի բուհերի մեծամասնությունն ունի մարդկային ռեսուրսների կառավարման բարձր աստիճան: Ամենացածր սանդղակներում են գտնվում Հունգարիան և Խորվաթիան. առաջինում ռեկտորը նշանակվում է երկրի վարչապետի կողմից և ունի անսահմանափակ լիազորություններ, իսկ երկրորդում՝ կառավարումը կենտրոնացված է դասախոսների քաղծառայողի կարգավիճակ ունենալու պատճառով և համակարգվում է համապատասխան լիազոր մարմնի կողմից:

Ակադեմիական ինքնավարության տեսանկյունից համակարգերը շատ տարբեր են, որտեղ ամենացածր գնահատվածը Ֆրանսիան և Բելգիան են: Թեպետ այս երկրների համալսարանները իրավասու են մշակել իրենց կրթական ծրագրերը, սակայն ունեն շատ այլ սահմանափակումներ այս ուղղությամբ:

Եվրոպայի հյուսիսային հատվածի բուհերն ունեն կազմակերպչական ինքնավարության բարձր աստիճան՝ իրավասություն ունենալով նաև ընտրելու կառավարման խորհուրդների արտաքին անդամներին: Համակարգերից մեծամասնությունում պետությունները շարունակում են կառավարել արտաքին անդամների նշանակումը:

Ֆինանսական ինքնավարության տեսանկյունից Եվրոպայում համակարգերը բազմազան են, սակայն մեծամասնությունում ինքնավարության սահմանափակումը բարձրագույն կրթության վեցերորդ մակարդակում ուսումնական վարձավճարների չափի սահմանումն է պետության կողմից:

Արևելյան մշակույթից հետաքրքիր է Չինաստանի փորձը, որտեղ պետության դերը բարձրագույն կրթության մեջ բարձր է գնահատվում: Պետությունը վերահսկում, ձևավորում, ուղղորդում և ընտրողաբար ֆինանսավորում է համալսարաններին[3]:

Պետության բարձր մասնակցություն է նկատվում նաև հետսովետական տարածաշրջանի երկրներում, որտեղ պատմականորեն մնացել է բուհերի կենտրոնացված կառավարման ավանդույթները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

որոնցով կարգավորվում/ նկարագրվում է ինստիտուցիոնալ ինքնավարության քաղաքականությունը

1. Եվրոպական համալսարանների Համալսարանների Համընդհանուր հռչակագիր[2] (Magna Charta Universitatum, 1988)
2. Սալամանկայի հռչակագիր[3] (2001)
3. Գրացի հռչակագիր[4] (2003)
4. Լիսաբոնի հռչակագիրը[5] (2007)
5. Պրահայի հռչակագիրը[6] (2009)
6. Ակադեմիական ազատության, ինստիտուցիոնալ ինքնավարության և ժողովրդավարության ապագայի վերաբերյալ գլոբալ ֆորումի հռչակագիր[7] (2019)

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԱՇՆՎՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՆԵՍԿՕ, 2017

Ակադեմիական ազատությունը հիմնարար իրավունք է

- կրթել և իրականացնել քննարկումներ
- ծավալել հետազոտական գործունեություն և հրապարակել հետազոտական արդյունքները
- ազատ արտահայտել կարծիքը տվյալ հաստատության կամ համակարգի վերաբերյալ
- ազատ մասնակցել մասնագիտական կամ ներկայացուցչական ակադեմիական մարմիններում
- ազատ լինել ինստիտուցիոնալ գրաքննությունից

«Ակադեմիական ազատություն» հասկացության նկարագրման համար անգլալեզու աշխարհում տարբեր մոտեցումներ են կիրառվում:

Միջնադարյան ժամանակներից ակադեմիական ազատությունը նշանակում է պրոֆեսորի/դասախոսի՝ իր փորձագիտական ոլորտում դասավանդելու ազատություն՝ առանց արտաքին հսկողության, ինչպես նաև ուսանողի սովորելու ազատություն:

?

ԻՆՉ Է
Ակադեմիական ազատությունը

Ակադեմիական ազատությունը գիտահետազոտական աշխատանքներում և դասավանդման մեջ համալսարանական կյանքի հիմնական սկզբունքն է, և կառավարություններն ու համալսարանները, յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում, պետք է ապահովեն հարգանք այս հիմնարար պահանջի հանդեպ:
Մերժելով անհանդուրժողականությունը՝ համալսարանը մեծապես պատրաստ պետք է լինի բաց երկխոսության: Այն պետք է լավագույն հավաքատեղին լինի այն դասավանդողների համար, ովքեր, քաջատեղյակ լինելով արդի նորություններից և զինված լինելով կրթական տեխնոլոգիաներով, պատրաստ են զարգացնելու իրենց գիտելիքները գիտահետազոտական աշխատանքով, ինչպես նաև ցանկություն ունեն և ունակ են հաղորդելու իրենց գիտելիքները ուսանողներին:

Եվրոպական Համալսարանների համընդհանուր հռչակագիր,1988

Ակադեմիական ազատությունը կրթելու և քննարկումներ իրականացնելու, հետազոտական գործունեություն ծավալելու և հետազոտական արդյունքները հրապարակելու, իրենց կարծիքը տվյալ հաստատության կամ համակարգի վերաբերյալ ազատ արտահայտելու, ինստիտուցիոնալ գրաքննությունից ազատ լինելու և մասնագիտական կամ ներկայացուցչական ակադեմիական մարմիններում ազատ մասնակցելու հիմնարար իրավունք է:

ՅՈՒՆԵՍԿՕ[8], 1997

Ակադեմիական ազատության նպատակը համալսարանի առանձին անդամի պաշտպանվածությունն է, և ***ակադեմիական ազատությունը նույնքան պարտավորություն է, որքան իրավունք:*** *Սա նշանակում է, որ դասավանդողներն ու հետազոտողները ունեն պարտավորություն իրականացնելու հետազոտություն և բարձրագույն կրթության միջոցով տարածելու իրենց հայտնագործություններն ու համոզմունքները՝ լինելով պաշտպանված այդ պարտավորությունը օպտիմալ պայմաններում իրականացնելու համար:*

Թորենց[4], 2006

«Ակադեմիական ազատությունը ինքնին նպատակ չէ: Այն հնարավորություն է տալիս համալսարաններին ծառայելու հասարակությանը՝ նոր գիտելիք և հասկացություններ փնտրելու և տարածելու, ինչպես նաև դասախոսական աշխատակազմի և ուսանողների անկախ մտածելու և արտահայտվելու կարողությունը խթանելու միջոցով»:

Եվրոպական հետազոտական համալսարանների լիգայի «Ակադեմիական ազատությունը որպես հիմնարար իրավունք» աշխատություն[9], 2011

Ակադեմիական ազատությունը կարելի է դիտարկել որպես հետևյալ երեք ասպեկտների համախումբ.

1. Ակադեմիական համայնքի անդամների (աշխատակազմ և ուսանողներ) համար որպես ազատ արտահայտվելու անհատական իրավունք, հիմնականում՝ որպես ազատ ուսումնասիրողներ, ներառյալ՝ ուսումնառելու, դասավանդելու, հետազոտություններ իրականացնելու և տեղեկատվություն ձեռք բերելու ազատություն, խոսքի և հրապարակման ազատություն (այդ թվում՝ «սխալվելու իրավունք») և համալսարանից դուրս մասնագիտական գործունեություն ծավալելու իրավունք:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության և/կամ նրա ենթակառուցվածքային միավորների (ֆակուլտետներ, հետազոտական ստորաբաժանումներ և այլն) կոլեկտիվ կամ ինստիտուցիոնալ ինքնավարություն, որը ենթադրում է, որ բաժինները, ֆակուլտետները և բուհերը, որպես ամբողջություն, իրավունք ունեն (և պարտավոր են) պահպանելու և խթանելու ակադեմիական ազատության սկզբունքները իրենց ներքին և արտաքին գործընթացներում:

3. Պետական մարմինների համար պարտավորություն՝ հարգելու և պահպանելու ակադեմիական ազատությունը և նպաստելու այդ իրավունքի արդյունավետ իրագործելիությանը:

Ամերիկյան պատմաբանների կազմակերպության (Organization of American Historians) ակադեմիական ազատության հանձնաժողովի կողմից մշակվել է «Ակադեմիական ազատության ուղեցույցներ և լավագույն փորձ» ձեռնարկը, որտեղ ակադեմիական ազատությունը տրոհվում է երեք հիմնական բաղադրիչների[10].

1 Հետազոտության և հետազոտական արդյունքների հրապարակում

- հետազոտություններ կատարելու և փաստերի ու ապացույցների հիման վրա եզրահանգումներ անելու ազատություն
- հետազոտողների իրավունքի պաշտպանում՝ մեթոդաբանությունը ընտրելու, եզրակացություններ անելու և դրանց ներդրումային արժեքը հաստատելու, սակայն չի պաշտպանում նրանց պնդումները քննադատությունից

2 Դասավանդում և ուսումնառություն, որը դասախոսին իրավունք է տալիս

- ընտրելու դասավանդման նյութերը և բովանդակությունը
- ընտրելու դասավանդման մեթոդաբանությունը
- առաջադրանքներ տալու և գնահատելու ուսանողի կատարողականը

Պետք է հաշվի առնել, որ դասավանդման և ուսումնառության ազատության մեջ նույնպես կարող են ի հայտ գալ սահմանափակումներ՝ կախված տարբեր իրադրություններից, մասնավորապես՝ առարկաների միջև համաձայնեցում, բուհի կողմից սահմանափակումներ (որն արտացոլված է աշխատանքային պայմանագրում)՝ ելնելով բուհի ուղղվածությունից, այլոց իրավունքների խախտում, և այլն:

3 Հասարակական գործունեություն/արտահայտում

ավելի մեծ թվով հանրության համար սոցիալական, քաղաքական, տնտեսական և այլ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած հարցի վերաբերյալ համապատասխան փորձագիտական աշխատանք կատարելու իրավունք:

2010թ.-ին Քերի Նելսոնը հոդվածի տեսքով հրապարակում է **«Ակադեմիական ազատություն սահմանները»** (Defining academic freedom) ձեռնարկը, որտեղ ներառում է ակադեմիական ազատության բոլոր հնարավոր ձևերն և սահմանափակումները՝ նկարագրելով ակադեմիական ազատության տիրույթները[5]:

Ակադեմիական ազատությունը՝

- **Չի** տալիս իրավունք պրոֆեսորին/դասախոսին բռնություն իրականացնելու, սպառնալու, վախեցնելու, ծաղրելու կամ իր տեսակետները պարտադրելու ուսանողներին
- **Չի** պաշտպանում պրոֆեսորին/դասախոսին իր գործընկերների կամ ուսանողների մարտահրավերներից կամ նրանց իր հետ չհամաձայնելուց
- **Չի** պաշտպանում ուսանողներին և դասախոսներին կարգապահական գործողություններից, սակայն պահանջում է արդար և պատշաճ վերաբերմունք նրանց նկատմամբ
- **Չի** խոչընդոտում/խանգարում դասախոսին պահանջել ուսանողից դասընթացի հանձնարարականների կատարում
- Այլ սահմանափակումներ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ուսանողների կողմից առանց դասախոսի թույլտվության դասընթացի ձայնագրում և տարածում սոցիալական ցանցերում:

Քաղաքական նպատակներով հաստատության ղեկավարության կողմից դասախոսի կամ ուսանողի քաղաքական տարակարծություն արտահայտելու սահմանափակում:

Վարչական քաղաքականությունների կամ առաջարկություններին հետ չհամաձայնելու, կարծիք արտահայտելու հետևանքով դասախոսին աշխատանքից հեռացում:

Կարևորում և ֆինանսավորում միայն այն հետազոտական ծրագրերին, որոնք ինչ-որ չափով թեմատիկայով հասկանալի են կամ հետաքրքրություն են ներկայացնում ծրագիրը գնահատող հանձնաժողովի անդամների համար, իսկ ծրագրերը, որոնք հանձնաժողովի անդամների համար հետաքրքիր կամ ըմբռնելի չեն՝ դիտարկվում են որպես երկրորդական:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ,
որոնցով կարգավորվում/ նկարագրվում է ակադեմիական ազատության քաղաքականությունը

1 | «Ակադեմիական ազատության և պաշտոնավարման մասին սկզբունքներ», Ամերիկյան քոլեջների և համալսարանների ասոցիացիա[11] (1940)

2 | «Բարձրագույն կրթության դասավանդող անձնակազմի կարգավիճակի վերաբերյալ առաջարկություն», որն ընդունվել է Գլխավոր գիտաժողովի կողմից իր քսանիններորդ նստաշրջանում, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ (1997)

3 | «Ակադեմիական ազատության, ինստիտուցիոնալ ինքնավարության և սոցիալական պատասխանատվության» քաղաքականության հռչակագիր, Համալսարանների միջազգային ասոցիացիա[12] (1998)

4 | Ք. Նելսոն, «Ակադեմիական ազատություն սահմանները»[13] (2010)

5 | «Ակադեմիական ազատության, ինստիտուցիոնալ ինքնավարության և ապագա ժողովրդավարության վերաբերյալ», Համաշխարհային ֆորումի հռչակագիր (2019)

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԱՋՆՎՈՒԹՅՈՒՆ

- համապատասխանություն էթիկայի և մասնագիտական սկզբունքների չափանիշներին
- համապատասխանություն փորձառությանը և արժեքների հետևողական համակարգին՝ կրթության, հետազոտության և գիտության մեջ որոշումներ կայացնելիս

Ակադեմիական բերեվարքությունը (academic integrity) բազմաշերտ հայեցակարգ է, քանի որ հետազոտողների կողմից, պատմական տարբեր զարգացումներով պայմանավորված, մի շարք մեկնաբանություններ է ստացել:

Ակադեմիական բարեվարքությունը և ակադեմիական անազնվության դեմ պայքարը խորապես արմատավորված են ամերիկյան կրթության մշակույթում:

1992 թ.-ին ի պատասխան Դոնալդ Մակքեյի կողմից անցկացվող ակադեմիական բարեվարքության և անազնվության վերաբերյալ տագնապալի մեծաքանակ հետազոտությունների՝ ամերիկյան համակարգում հիմնադրվում է Ակադեմիական բարեվարքության միջազգային կենտրոնը (International Center for Academic Integrity[14])՝ այն ակնկալիքով, որ Ակադեմիական բարեվարքության խնդիրներն ամբողջ բարդությամբ կվերհանվեն և կենտրոնի կողմից կտրվեն լուծումներ:

?

ԻՆՉ Է Ակադեմիական բարեվարքությունը

Ակադեմիական բարեվարքությունը էթիկայի և մասնագիտական սկզբունքներին, չափանիշներին, փորձառությանը և արժեքների հետևողական համակարգին համապատասխանությունն է, որոնցով առաջնորդվում են կրթության, հետազոտության և գիտության մեջ որոշումներ կայացնելիս:

Ակադեմիական բարեվարքության եվրոպական ցանց[6] (ENAI, 2018)

2010-2012 թվականներին Ավստրալիայում ***Ակադեմիական բարեվարքության չափանիշները նախագծի*** (Academic Integrity Standards Project (AISP)) շրջանակներում իրականացվում է ակադեմիական բարեվարքության վերաբերյալ բարձրագույն ուսումնական հաստատություններում ընկալումների հետազոտություն, որի արդյունքում նախագիծը առաջարկում է հետևյալ սահմանումը.

Ակադեմիական բարեվարքությունը ենթադրում է, որ հետազոտություններ իրականացնելիս, դասավանդման և ուսումնառության գործընթացներում և՛ անձնակազմը, և՛ ուսանողները գործում են ազնիվ, բաց և հաշվետու են իրենց գործողությունների համար, դրսևորում են արդարություն և թափանցիկություն, երբ գործ ունեն մարդկանց կամ հետազոտությունների հետ[15]:

Համաշխարհային մակարդակում որպես ակադեմիական բարեվարքության առանձին բաղադրիչ դիտարկվում է նաև

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՉ Է Հետազոտական բարեվարքությունը

Հետազոտության մեջ բարեվարքությունը խթանելու երեք հիմնական միջոցներ են առանձնացվում.

1 | քաղաքականություն և օրենսդրական կարգավորումներ

2 | վերահսկողություն և համապատասխանություն

3 | ուղղորդում և վերապատրաստում

Հետազոտական բարեվարքության երկրորդ համաշխարհային գիտաժողովի (Սինգապուր, 2010) արդյունքում ստեղծվել է **Հետազոտական բարեվարքության Սինգապուրի հայտարարագիրը**[16], որը հակիրճ նկարագրում է, թե ինչպես պետք է վարվեն հետազոտողները՝ հիմնվելով

i | ազնվության,

ii | պատասխանատվության,

iii | արդարության,

iv | լավ տնտեսվարման սկզբունքների,

ինչպես նաև հետևյալ **14** պարտավորությունների վրա [7].

1 **Բարեվարքություն**
(Integrity)

2 **Կանոնակարգի պահպանում**
(Adherence to Regulations)

3 **Հետազոտական մեթոդներ**
(Research Methods)

4 **Հետազոտությունների վերաբերյալ գրառումներ**
(Research Records)

5 **Հետազոտական արդյունքներ**
(Research Findings)

6 **Հեղինակային իրավունք**
(Authorship)

7 **Հրապարակման երախտագիտություն**
(Publication Acknowledgement)

8 **Գրախոսում**
(Peer Review)

9 **Շահերի բախում**
(Conflict of Interest)

10 **Հանրային հաղորդակցություն**
(Public Communication)

11 **Անպատասխանատու հետազոտական պրակտիկայի մասին զեկուցում**
(Reporting Irresponsible Research Practices)

12 **Արձագանք անպատասխանատու հետազոտական պրակտիկային**
(Responding to Irresponsible Research Practices)

13 **Հետազոտական միջավայր**
(Research Environments)

14 **Հասարակական նկատառումներ**
(Societal Considerations)

Բարեվարքություն (Integrity)	Հետազոտողը պետք է պատասխանատու լինի իր կողմից իրականացված հետազոտությունների հուսալիության համար:
Կանոնակարգի պահպանում (Adherence to Regulations)	Պետք է տեղյակ լինի և հետևի հետազոտություններին վերաբերող կանոնակարգերին և քաղաքականությանը:
Հետազոտությունների մեթոդներ (Research Methods)	Պետք է կիրառի համապատասխան հետազոտական մեթոդներ, եզրահանգումները հիմնավորի փաստերով և ապացույցներով՝ ենթարկելով դրանք քննական վերլուծության, ինչպես նաև եզրահանգումներն և մեկնաբանությունները պետք է զեկուցի ամբողջությամբ և օբյեկտիվորեն:
Հետազոտությունների վերաբերյալ գրառումներ (Research Records)	Պետք է իրականացնի հստակ, ճշգրիտ գրառումներ հետազոտության ամբողջ ընթացքի վերաբերյալ այնպես, որ ուրիշները կարողանան ստուգել և վերարտադրել աշխատանքը:
Հետազոտական արդյունքներ (Research Findings)	Պետք է բացահայտ և արագորեն կիսվի բացահայտումներով և տվյալներով՝ անմիջապես դրանց նկատմամբ գերակայության և սեփականության հայց ներկայացնելուց հետո:
Հեղինակային իրավունք (Authorship)	Հետազոտողները պետք է ստանձնեն պատասխանատվություն իրենց բոլոր հետազոտությունների հրապարակումների, ֆինանսավորման դիմումների, զեկույցների և իրենց հետազոտությունների ներկայացման համար: Համահեղինակներ պետք է ներառվեն բոլոր նրանք, և միայն նրանք, ովքեր բավարարում են հեղինակային իրավունքի կիրառման չափանիշներին:

Հրապարակման երախտագիտություն (Publication Acknowledgement)	Հետազոտողներն իրենց հրապարակումներում պետք է նշեն բոլոր այն մարդկանց անունները և դերը, ովքեր չեն համապատասխանում հեղինակային իրավունքի չափանիշներին, սակայն նշանակալի ներդրում են ունեցել հետազոտության մեջ, ներառյալ՝ գրողներին, ֆինանսավորողներին, հովանավորներին և այլոց:
Գրախոսում (Peer Review)	Հետազոտողներն այլ հեղինակի աշխատանք գրախոսելիս պետք է պահպանեն գաղտնիությունը և տան արդար, արագ և ճշգրիտ գնահատականներ:
Շահերի բախում (Conflict of Interest)	Հետազոտողները պետք է բացահայտ ներկայացնեն ֆինանսական և այլ շահերի բախումները, որոնք կարող են վնաս հասցնել հետազոտական առաջարկություններին, հրապարակումներին, հանրային հաղորդակցությանը, ինչպես նաև բոլոր վերանայման գործողություններում իրենց աշխատանքի հուսալիությանը:
Հանրային հաղորդակցություն (Public Communication)	Հետազոտողները հետազոտության արդյունքների կիրառման և կարևորության վերաբերյալ հանրային քննարկումների ընթացքում պետք է սահմանափակեն իրենց փորձագիտական/մասնագիտական մեկնաբանությունները, և հստակ տարբերակեն մասնագիտական մեկնաբանությունները անձնական տեսակետի վրա հիմնված կարծիքներից:

Անպատասխանատու հետազոտական պրակտիկայի մասին զեկուցելը (Reporting Irresponsible Research Practices)	Հետազոտողները պետք է համապատասխան պատկան մարմիններին զեկուցեն հետազոտության մեջ կասկածվող ցանկացած անբարեխիղճ վարքագծի վերաբերյալ, ներառյալ՝ կեղծիքը, կեղծումը կամ գրագողությունը և այլ անպատասխանատու հետազոտական պրակտիկաներ, որոնք վտանգում են հետազոտության հուսալիությունը, ինչպիսիք են անզգուշությունը, հեղինակներին ոչ պատշաճ ցիտումը, սխալ տվյալների հրապարակումը, կամ ապակողմնորոշիչ վերլուծական մեթոդների օգտագործումը:
Արձագանք անպատասխանատու հետազոտական պրակտիկային (Responding to Irresponsible Research Practices)	Հետազոտական ինստիտուտները, ինչպես նաև ամսագրերը, մասնագիտական կազմակերպությունները և գործակալությունները, որոնք հետազոտության նկատմամբ ունեն պարտավորություն, պետք է ունենան ընթացակարգեր չարաշահման մասին պնդումներին և այլ անպատասխանատու հետազոտական պրակտիկաներին վերաբերող մեղադրանքներին արձագանքելու և նման վարքագիծը բարի նպատակներով զեկուցող անձանց պաշտպանելու համար:
Հետազոտական միջավայր (Research Environments)	Հետազոտական հաստատությունները մինչ հետազոտական բարեվարքությանը նպաստող աշխատանքային միջավայրի ապահովումը պետք է ստեղծեն և ապահովեն կրթության, առաջխաղացման խրախուսող միջավայր:

Հասարակական նկատառումներ
(Societal Considerations)

- Հետազոտողները և հետազոտական հաստատությունները պետք է գիտակցեն, որ իրենք ունեն բարոյական պարտավորություն համեմատելու հասարակական օգուտը իրենց աշխատանքներից բխող ռիսկերի նկատմամբ:

Մի շարք երկրներ ստեղծել են իրենց հետազոտական բարեվարքության գրասենյակները կամ ունեն հետազոտական բարեվարքության պաշտպան, օրինակ՝ Հետազոտական բարեվարքության գրասենյակը (ORI[17]) ԱՄՆ-ում, Գերմանական հետազոտությունների հիմնադրամը (DFG) Գերմանիայում ունի հետազոտական բարեվարքության պաշտպան[18], Գիտական անազնվության հանձնաժողովը[21] Դանիայում[7]:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիական Ազնվության Միջազգային Կենտրոն, 2014

Անկախ իրավիճակից

հիմնարար արժեքների պահպանման պարտավորություն

- Ազնվություն
- Վստահություն
- Արդարություն
- Հարգանք
- Պատասխանատվություն
- Խիզախություն

Ակադեմիական ազնվության վերաբերյալ մեկնարկային լայնածավալ հետազոտությունը կարելի է համարել Ուիլիամ Բաուերսի 1964 թ.-ի ԱՄՆ-ի կրթական համակարգում (բուհերում և ավագ դպրոցներում) համազգային քանակական հարցման հիման վրա կատարված ուսումնասիրությունը, որտեղ նա ցույց է տալիս, որ ուսանողների մոտ կեսն իր ուսումնառության ընթացքում ինչ-որ չափով գոնե մեկ անգամ ցուցաբերում է անազնիվ վարքագիծ [8]:

Մոտ երեսուն տարի անց թեմայի շրջանակներում մեծաքանակ հետազոտություններ են իրականացվել Մըք Քեյբի և Տրեվինոյի կողմից, որոնք վկայում են, որ ուսանողների 75%-ը ներգրավվում է այս կամ այն տեսակի անազնիվ վարքագծի մեջ [9]:

?

ԻՆՉ Է Ակադեմիական ազնվությունը

Ակադեմիական բարեվարքության միջազգային կենտրոնի կողմից[10] ակադեմիական ազնվությունը ձևակերպվում է որպես անկախ իրավիճակից վեց հիմնարար արժեքների պահպանման պարտավորություն: Այդ արժեքներն են.

Ազնվություն	Honesty
Վստահություն	Trust
Արդարություն	Fairness
Հարգանք	Respect
Պատասխանատվություն	Responsibility
Խիզախություն	Courage

Ազնվություն (Honesty)

Ակադեմիական բարեվարքության կրողները մտավոր և անձնական ազնվության միջոցով որոնում են ճշմարտություն և գիտելիք ուսումնառության, կրթության, հետազոտության և համայնքին ծառայելու մեջ:

Վստահություն (Trust)

Ակադեմիական բարեվարքության կրողները նպաստում և ապավինում են փոխադարձ վստահության միջավայրի ստեղծմանը: Փոխադարձ վստահության միջավայրը խրախուսում և աջակցում է գաղափարների ազատ փոխանակմանը՝ հնարավորություն տալով գիտական հետազոտությունների ներուժի լիարժեք դրսևորմանը:

Արդարություն (Fairness)

Ակադեմիական բարեվարքության կրողները հստակ և թափանցիկ չափանիշների, ակնկալիքների և պրակտիկաների ձևավորման միջոցով աջակցում են ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխհարաբերություններում արդարությանը:

Հարգանք (Respect)

Ակադեմիական բարեվարքության կրողները արժևորում են ինտերակտիվ, համագործակցային, մասնակցային բնույթի ուսումնառությունը: Պատվում, գնահատում և դիտարկում են կարծիքների և գաղափարների բազմազանությունը:

Պատասխանատվություն (Responsibility)

Ակադեմիական բարեվարքության կրողները հենվում են անձնական պատասխանատվության վրա, որոնք զուգորդվում են անհատների և խմբերի կողմից պատրաստակամությամբ՝ օրինակով առաջնորդելու, պահպանելու փոխադարձ համաձայնեցված չափորոշիչները և ձեռնարկելու գործողություններ, երբ նկատում են սխալ արարքներ:

Խիզախություն (Courage)

Ակադեմիական բարեվարքությունը կրող հասարակություն ձևավորելու և պահպանելու համար պահանջվում է ավելին, քան ուղղակի հիմնարար արժեքներին հավատալը: Արժեքները ուղղակի նկարագրելուց իրական գործողությունների վերածելը, ճնշման ներքո և անբարենպաստ պայմաններում նրանց համար պայքարելը վճռականություն, նվիրվածություն և քաջություն է պահանջում:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Արևմտյան հետազոտություններում ակադեմիական ոչ ազնիվ երևույթների հետազոտման համար օգտագործվում են հետևյալ եզրույթները.

ակադեմիական անազնվություն	academic dishonesty
ակադեմիական բարեվարքություն	academic integrity
խարդախություն	cheating behavior
ակադեմիական անբարեխիղճ վարքագիծ	academic mis-conduct
գրագողություն	plagiarism

Ակադեմիական ազնվության երևույթը ամբողջապես հասկանալու համար հաճախ անհրաժեշտ է լինում նաև նկարագրել, թե ինչ է ակադեմիական անազնվությունը:

> *Ակադեմիական անազնվությունը ակադեմիական միջավայրի ուղղակի շահառուների կողմից այնպիսի վարքագծի դրսևորումն է, որը նվազեցնում է ակադեմիական համակարգի արդյունավետությունը և հասարակության մեջ նրա վստահելիությունը:*

Արևմտյան մշակույթներում ակադեմիական անազնվության հաճախ հանդիպող ձևերն են[20].

Պատճենում | արտագրություն	**Copying**
Խարդախություն	**Cheating**
Գրագողություն	**Plagiarism**
Նյութերի գողություն	**Theft Of Materials**
Գրառումների կեղծում	**Falsifying Records**

Պատճենում/արտագրություն (Copying)

Հանձնարարության պատճենումը կամ արտագրելը մեկ այլ ուսանողի աշխատանքից, որը կարող է լինել թե՛ թղթային և թե՛ էլեկտրոնային, թե՛ ավարտուն աշխատանքից, և թե՛ ընթացիկ, պատճենում google փաստաթղթից և/կամ այլ կայքերից: Այն անձը, ով թույլ է տալիս պատճենումը իր աշխատանքից, նույնպես դրսևորում է ակադեմիական անազնվություն:

Խարդախություն (Cheating)

Չարտոնված հուշաթերթերի օգտագործում թե՛ թղթային, թե՛ էլեկտրոնային կամ այլ կանխամտածված խաբեություններ: Խարդախություն է նաև առաջադրանքի վերաբերյալ նյութի լուսանկարումը և բջջային հեռախոսի միջոցով այդ նյութի տրամադրումը, ինչպես նաև թվային ռեսուրսների կամ համապատասխան հավելվածի օգտագործումը հանձնարարությունը կատարելու համար, ինչպես օրինակ google translate կամ photomath հավելվածներն են:

Գրագողություն (Plagiarism)

Ուրիշի աշխատանքի օգտագործումը կամ տեղեկատվության պատճենումը որևէ թվային կամ թղթային ռեսուրսից և որպես իր սեփական աշխատանք կամ գաղափարներ ներկայացնելը՝ առանց վերագրման: Գրագողություն է նաև այլ ուսանողի աշխատանքը սեփական անվան տակ ներկայացնելը: Գրագողության վերաբերյալ առկա մի շարք սահմանումներից ընդունելի է հատկապես Վեբստերի (Webster, Webster's College Dictionary) սահմանումը, ըստ որի՝ «գրագողությունը մեկ այլ հեղինակի բառերի, մտքերի օգտագործումն է և դրանց ներկայացումը իբրև սեփականի»:

Նյութերի գողություն (Theft of materials)

Մեկ այլ ուսանողի կամ դասախոսի նյութը կամ աշխատանքը վերցնելը առանց նրանց գիտության, կամ առանց թույլտվության նրանց համակարգչի, էլեկտրոնային փոստի կամ ուսանողական էլեկտրոնային հաշվի օգտագործումը, որը ինքնության գողության ձև է:

Գրառումների կեղծում (Falsifying records)

Մուտք գործելը տվյալների բազա և տվյալները փոխելը կամ վերցնելը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ակադեմիական անազնվության դեմ պայքարի ձև է ուսումնական հաստատություն մուտք գործելիս ուսանողների պատվո օրենսգրքի ընդունումը: Այն հայտարարություն է, որով ուսանողները պարտավորվում են չստել, չխաբել, չգողանալ և չհանդուրժել այլոց կողմից պատվո օրենսգրքի կանոնների խախտումները[12]: Խախտումների հայտնաբերման դեպքում ուսանողները ենթարկվում են օրենսգրքով սահմանված պատժամիջոցներին:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱՉՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՂ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

- գրագողություն՝ ներկայացված աշխատանքում այլ հեղինակներից վերցված մտքերի, հասկացությունների, արտահայտությունների և նույնիսկ բառերի կիրառում՝ առանց հեղինակին ցիտելու, իբրև սեփական աշխատանքի ներկայացում
- գնահատականի կեղծումը
- ուրիշի կողմից իրականացված առաջադրանքները որպես իր սեփական աշխատանք ներկայացնելը
- դասախոսին ստելը՝ իբր ընտանիքում անախորժություն է պատահել, օրինակ՝ մտերիմ հարազատներից որևիցե մեկի մահը, որի պատճառով չի ներկայացել
- ստելը՝ իբր հիվանդ է եղել կամ կոտրել է ձեռքը և չի կարողացել առաջադրանքը ժամանակին կատարել
- քննության ժամանակ արտագրությունը՝ նախապես պատրաստած հուշաթերթի կամ բջջային հեռախոսի միջոցով
- դասախոսին գնահատականի դիմաց կաշառք առաջարկելը
- այլ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ,
որոնցով կարգավորվում/ նկարագրվում է ակադեմիական ազնվության քաղաքականությունը

1 | Հետազոտական բարեվարքության Սինգապուրի հայտարարագիր (2010)

2 | Հետազոտական բարեվարքության Եվրոպական վարքագծի նորմերը[13] (2011)

3 | «Բարձրագույն կրթության ոլորտում էթիկայի կանոնագրքի ուղեկիշեր[21]», Համալսարանների միջազգային ասոցիացիայի և Մագնա Կարտա դիտարան (2012)

4 | «Հետազոտական բարեվարքության սկզբունքներ[14]», Համաշխարհային հետազոտական խորհուրդ (2012)

5 | Եվրոպայի խորհրդի 24-րդ նստաշրջանի ամփոփիչ հռչակագիր[22], Հելսինկի (2013)

6 | Կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և բարեվարքության համաեվրոպական հարթակ[23] (ԷԹԻՆԵԴ) (2013)

- ինստիտուցիոնալ ինքնավարություն
- ակադեմիական ազատություն
- ակադեմիական բարեվարքություն
- ակադեմիական ազնվություն

Բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման օղակների ներկայացուցիչների

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2004 թվականի դեկտեմբերի 14-ին հաստատված ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքի 6-րդ հոդվածը ընդհանրական ձևով սահմանում է ՀՀ բուհերի ինքնավարությունը, իրավասությունը և ակադեմիական ազատությունները:

Վերջին տասնամյակի ընթացքում վերոնշյալ թեմաները, ինչպես նաև ակադեմիական ազնվությունը և բարեվարքությունը դարձել են ՀՀ-ում բարձրագույն կրթության քննարկումների և սեմինարների հիմնական թիրախները՝ որպես բարձրագույն կրթության զարգացման հիմնական երաշխիք: Բազում քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ ակադեմիական ազատությունների ռեֆորմների խթանման համար բուհերի բարձր կառավարման մարմինների ակտիվ ներգրավվածությունը խիստ անհրաժեշտ գործոն է:

«ԷԿՍԵՈ» կրթության և կարիերայի զարգացման հիմնադրամը Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ակադեմիական բարեվարքության մասնակցային և ժողովրդավարական քաղաքականություն» ծրագրի շրջանակում իրականացրել է հանրային ընկալումների ուսումնասիրություն, որի նպատակն է պարզել ՀՀ չորս մարզային բուհերի՝ Վանաձորի, Գորիսի, Շիրակի և Գավառի պետական համալսարանների հոգաբարձուների խորհրդում բուհի կողմից ներգրավված ներկայացուցիչների ընկալումները չորս ուղղություններով. ինստիտուցիոնալ ինքնավարություն, ակադեմիական ազատություններ, ակադեմիական ազնվություն և բարեվարքություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունում ընդգրկվել են ՀՀ 4 մարզային բուհերի՝ Վանաձորի, Գորիսի, Շիրակի և Գավառի պետական համալսարանների հոգաբարձուների խորհրդում բուհի կողմից ներգրավված ներկայացուցիչները՝ դասախոսները և ուսանողները:

Սույն ուսումնասիրությունը չի կրում ներկայացուցչական բնույթ, այն միտված է ընդհանրական ընկալումների վերհանմանը. վերջինիս արդյունքներն ամփոփված են առանց մասնավորեցումների:

Ուսումնասիրության ընթացքում կազմվել է երկու տեսակի հարցաշար՝ քանակական և որակական տվյալներ հավաքագրելու համար: Քանակական տվյալները հավաքագրվել են առցանց հարցաշարի, իսկ որակական տվյալները՝ ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով: Հարցաշարերը ներառել են հարցեր չորս ուղղություններով. ինստիտուցիոնալ ինքնավարություն, ակադեմիական ազատություն, ակադեմիական ազնվություն և բարեվարքություն:

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

Ինստիտուցիոնալ ինքնավարություն

Ինստիտուցիոնալ ինքնավարության ընկալումների վերաբերյալ տվյալները հավաքագրվել են թե հարցաշարի, և թե ֆոկուս-խմբային քննարկման միջոցով: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «ինստիտուցիոնալ ինքնավարություն» հասակցությունն ունի բազմազան ընկալումներ, և շատ հաճախ այն թե մասնակից դասախոսների, թե ուսանողների կողմից նույնացվում է ակադեմիական ազատությունների հետ: Սակայն, ընդհանուր առմամբ, այն դիտարկվում է որպես բուհի կառավարում՝ առանց արտաքին միջամտության և կառավարման քաղաքականացման:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ինստիտուցիոնալ ինքնավարության հարցում կան բացեր գործող օրենսդրության, ներբուհական կանոնակարգերի և բուհերի ներկայացուցիչների կողմից ինստիտուցիոնալ ինքնավարության իրագործման ընկալման միջև: Չնայած ինքնավարության կարևորության գիտակցմանը՝ որպես ակադեմիական ազատությունների ապահովման երաշխիք, բուհերի ներկայացուցիչները գտնում են, որ հնարավոր չէ ամբողջությամբ ապահովել ինստիտուցիոնալ ինքնավարությունը, քանի որ կան կանոնակարգեր, որոնք սահմանափակում են այն: Մասնակիցները հաճախ հղում են կատարում ՀՀ կառավարությանը՝ որպես բուհի հիմնադիր՝ այսպիսով նվազեցնելով բուհերի պատասխանատվությունը և ձևավորելով պատասխանատվությունը պետության հետ կիսելու համոզմունք:

Գրեթե բոլոր բուհերն իրենց ռազմավարությունում և տարբեր կանոնակարգերում ունեն դրույթներ ինստիտուցիոնալ ինքնավարության վերաբերյալ, սակայն դրանք հիմնականում ֆորմալ են և հռչակագրային: Հետաքրքիր է, որ չնայած ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բուհերի ինքնավարությունը սահմա-

նափակող կանոնակարգերի առկայությանը, առկա է նաև այնպիսի կարծիք, որ բուհերը վայելում են լիիրավ ինքնավարություն, և սահմանափակումներ, որպես այդիպիսիք, չկան:

Հարցվածները հիմնականում չեն տիրապետում ինստիտուցիոնալ ինքնավարությանն առնչվող մասնագիտական եզրույթներին և մասամբ են պատկերացնում դրանց իրագործելիությունը բուհում:

Հարցվածների մեծ մասը գտնում է, որ բուհերը տարբեր տիրույթներում ունեն տարբեր մակարդակի ինքնավարություն, որտեղ ամենալայն իրավուսությունները տրված են ակադեմիական և մարդկային ռեսուրսների կառավարմանը: Օրինակ՝ ըստ հարցվածների բուհերը կարող են ինքնուրույն ձևավորել իրենց կրթական ծրագրերը, սահմանել ուսումնառության վերջնարդյունքները: Հետաքրքիր է, որ հարցվածներից մի քանիսը չեն դիտարկում ՀՀ բարձրագույն կրթության լիազոր մարմնի կողմից ուսանողների ընդունելության գործընթացների կանոնակարգումը կամ ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքով (հաստատված 14.12.2004 թ.) պարտադիր դասընթացների ընդգրկումը կրթական ծրագրերում որպես ակադեմիական ինքնավարության սահմանափակում: Նույն կերպ, ակադեմիական ինքնավարության սահմանափակում չեն ընկալվում այնպիսի սահմանափակումները, ինչպիսիք են ուսանողների ընդհանուր թվաքանակը որոշելու, բակալավրիատի և մագիստրատուրայի դասավանդման լեզուն ընտրելու հնարավորության բացակայությունը:

Կազմակերպչական և ֆինանսական ինքնավարության տեսանկյունից բուհերի ներկայացուցիչների կարծիքով կա որոշակի սահմանափակում, մասնավորապես՝ արտաքին մարմինների և բուհի ներկայացուցիչների հավասար ներգրավվածության տեսքով բուհի հոգաբարձուների կազմում: Թեպետ հարկ է նշել, որ ուսանողների շրջանակում կա կարծիք, որ արտաքին ներգրավվածությունը միայն նպաստում է բուհի զարգացմանը՝ գործնական և առաջընթացին միտված առաջարկների ներկայացմամբ: Հետաքրքիր է, որ բուհական ֆինանսական ինքնավարության սահմանափակում է դիտարկվում նաև ուսանողական վարձավճարներից և

ուսանողների քանակից կախվածությունը՝ շատ հաճախ դիտարկելով դա որպես հնարավոր ֆինանսական եկամտի հիմնական աղբյուր: Ընդհանրապես, հարցվածների համոզմամբ, բուհական ցածր ֆինանսավորման հարցը առանցքային տեղ է զբաղեցնում բոլոր չորս ուղղություններում՝ ցածր աշխատավարձերը և մեկ աղբյուրից ֆինանսավորումը դիտարկելով որպես բուհական ինքնավարության սահմանափակում և ակադեմիական անբարեվարքության դրսևորման հիմնական պատճառ:

Հարցվածների շրջանակում առկա էր նաև կարծիք, որ ինստիտուցիոնալ ինքնավարությունը սահմանափակվում է բուհի կառավարման բարձր օղակներով՝ չընդգրկելով այլ ստորաբաժանումներ, մասնավորապես ամբիոնները/ վարչական ստորաբաժանումները միջամտում են ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերին, որը թույլ չի տալիս ցուցաբերել ստեղծագործական անհրաժեշտ մոտեցում: Այսինքն, միջամտության մեխանիզմը վարչարարական է և չի կրում ակադեմիական միջավայրին անհրաժեշտ արժեհամակարգի և մշակույթի ձևավորմանը միտված բնույթ:

Միևնույն ժամանակ, բուհերի ներկայացուցիչները կարծում են, որ մինչ լիիրավ ինքնավարության անցումը անհրաժեշտ է ստեղծել ներքին կանոնակարգեր, ձևավորել արժեհամակարգ, որտեղ ինստիտուցիոնալ խնդիրները վեր կդասվեն անձնականից և բուհերի գործունեությունը կախված չի լինի անհատի անձնային արժեքներից և սկզբունքներից:

Այսպիսով՝ *ինստիտուցիոնալ ինքնավարության վերաբերյալ ընկալումները թույլ են տալիս եզրահանգել, որ, չնայած բուհերի ինքնավարության մի շարք սահմանափակումներին, բուհերի ներկայացուցիչները չեն մեկնաբանում դրանք որպես ինստիտուցիոնալ ինքնավարության սահմանափակում: Դրանք ընկալվում են որպես իրողություն, որն իր հերթին թույլ չի տալիս հանդես գալ նախաձեռնություններով, նոր գաղափարների առաջադրմամբ, տարբեր տիրույթներում սեփական քաղաքականության մշակմամբ և իրագործմամբ:*

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ
Ակադեմիական ազատություն

Ուսումնասիրության մասնակիցների կողմից ակադեմիական ազատության հարցը դիտարկվել է երկու հարթություններում՝ քաղաքականության առկայության և իրավունքների կիրառման:

Հարցման բոլոր մասնակիցները նշել են, որ իրենց բուհերն ունեն ակադեմիական ազատությունների վերաբերյալ որդեգրած քաղաքականություն, և ակադեմիական ազատությունները, հիմնականում, պաշտպանված են իրենց բուհերում: Հարցման մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ ակադեմիական ազատությունների պաշտպանությունը գտնվում է կառավարման, ակադեմիական և ուսանողական օղակների իրավասությունների տիրույթում, որտեղ յուրաքանչյուրն ունի իր դերակատարումը:

Ակադեմիական ազատությունը դիտվում է որպես ազատ մտքեր արտահայտելու, անկախ հետազոտություններ իրականացնելու և արդյունքները հրապարակելու հնարավորություն:

Համաձայն հավաքագրված քանակական տվյալների՝ հարցվածների 81.8 %-ը գտնում է, որ ակադեմիական ազատությունները մեծամասամբ պաշտպանված են իրենց բուհում, մինչդեռ մնացյալ 18.2 %-ը գտնում է՝ ոչ այդքան: Բուհերի ներկայացուցիչները հիմնականում վայելում են ակադեմիական ազատություն և չունեն որևէ կաշկանդվածություն մասնագիտական կարծիք արտահայտելու, դասավանդման մեթոդները ընտրելու և կիրառելու, ինչպես նաև դասընթացից բխող գրականության, հետազոտության թեմայի ընտրության և արդյունքների հրապարակման հարցում: Սակայն, գրեթե բոլորը նշել են, որ ունեն որոշակի սահմանափակումներ գնահատման մեթոդների ընտրության հարցում և շատ հաճախ գնահատման ձևերը կենտրոնացված, կանխորոշված են:

Սա ոչ միայն թույլ չի տալիս ընտրել ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան գնահատման անհրաժեշտ մեթոդները, այլև գնահատման որոշ ձևերի դեպքում, ինչպես օրինակ՝ թեստերի, ունի բացասական ազդեցություն գնահատման գործընթացի վրա:

Այնուամենայնիվ, բուհերի ներկայացուցիչների համոզմամբ, ակադեմիական ազատությունները չպետք է ընկալվեն որպես ամենաթողություն, այլ՝ զուգորդվեն պատասխանատվության ստանձմամբ:

Ուսումնասիրության մասնակից թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների կողմից կարևորվում է դասախոսի կողմից իր մասնագիտական գիտելիքի շարունակական արդիականացման, լսարանում ուսանողներին անհրաժեշտ գիտելիքի փոխանցման և հմտությունների ձևավորման կարևորության գիտակցումը: Ակադեմիական հանրության ակադեմիական ազատությունների ապահովման մշակույթի ձևավորումը և անհրաժեշտ արժեհամակարգի արմատավորումը կարող է իրականացվել համապատասխան կանոնակարգերի և հաշվետվողականության սկզբունքների ներդրմամբ:

Անդրադարձ կատարելով ուսանողների ակադեմիական ազատություններին՝ հարկ է նշել, որ այն ընկալվում է հիմնականում որպես ազատ կարծիք արտահայտելու իրավունք:

Ուսումնասիրության մասնակիցներից միայն մի քանիսը նշեցին, որ ուսանողների կողմից հետազոտական թեմաների ընտրությունը ևս գտնվում է ուսանողների ակադեմիական ազատությունների շրջանակում: Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ավարտական աշխատանքների թեմաներն առաջադրվում են հիմնականում ամբիոնների կողմից, և արդյունքում հազվադեպ է լինում, որ ուսանողը ցուցաբերում է նախաձեռնողականություն իր թեմայի ընտրության հարցում: Այնուամենայնիվ, բուհերը բաց են ուսանողների առաջարկներին, և ուսանողի կողմից ցանկության դեպքում թեման կարող է քննարկվել համատեղ:

Այսպիսով՝ *հարցվածները գտնում են, որ, ընդհանուր առմամբ, իրենց ակադեմիական ազատությունը, մասնավորապես՝ դասավանդելու և քննարկումներ կազմակերպելու, հետազոտական գործունեություն ծավալելու և արդյունքները հրապարակելու, ազատ արտահայտելու կարծիքը հաստատության կամ համակարգի վերաբերյալ, ազատ մասնակցելու ակադեմիական ներկայացուցչական մարմիններում, որևիցե կերպ սահմանափակված չէ: Սակայն, միևնույն ժամանակ, ակադեմիական ազատությունը հաճախ ընկալվում է որպես ամենաթողություն, ուստի՝ անհրաժեշտ են լայն լուսաբանման աշխատանքներ՝ ակադեմիական ազատության իրավունքը պատասխանատվությամբ և մասնագիտական էթիկայի սկզբունքների զուգորդմամբ կիրառելու վերաբերյալ: Ուսանողների ակադեմիական ազատությունը մասամբ սահմանափակված է, քանի որ ի սկզբանե իրենք հնարավորություն չունեն առաջադրելու իրենց հետաքրքրող ուսումնասիրության թեման, որը չի ընկալվում որպես իրենց ակադեմիական ազատության սահմանափակում՝ ենթադրելով, որ դա կանոնակարգային է, որը չի քննվում և ընդունվում է որպես իրողություն:*

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

Ակադեմիական բարեվարքություն

Մասնակիցները հաճախ «ակադեմիական բարեվարքություն» և «ակադեմիական ազնվություն» հասկացությունները կիրառում են միմյանց փոխարեն: Ակադեմիական բարեվարքությունը զուգադրվում է բուհի ներկայացուցիչների կողմից բարեկրթության, օրինականության, սոցիալական արդարության և թափանցիկության ապահովման, էմպատիայի դրսևորման, ինչպես նաև բարոյական և էթիկական նորմերին հետևելու հետ: Մասնակից դասախոսների և ուսանողների ընկալումները ակադեմիական բարեվարքության վերաբերյալ, ըստ էության, նույնն են՝ մի բացառությամբ, որ դասախոսների ձևակերպումներն ավելի մասնավորեցված են և օրինակներով հագեցած, մինչդեռ ուսանողները հիմնականում ընդհանրական են դիտարկում բարեվարքությունը որպես բարոյական և էթիկական նորմերի պահպանում:

Ուսումնասիրության մասնակիցները գտնում են, որ ակադեմիական բարեվարքության խրախուսման ձևը սեփական անձի բարեվարք օրինակն է, այսինքն՝ սեփական անձի համար բարեվարքության նորմերի անհատական սահմանումը և ցուցադրումը: Սակայն, այս դեպքերում, մտավախություն կա, որ ակադեմիական բարեվարքությունը չի լինի ընդհանրական ընդունելի արժեք և չի խթանի համապատասխան մշակույթի ձևավորումը: Մասնակիցները, լինելով մարզային բուհերի ներկայացուցիչներ, նշեցին, որ իրենց համայնքները փոքր են, և անբարեվարք պահվածքն անմիջապես տեսանելի է, ուստի՝ նմանատիպ դրսևորումները հազվադեպ են պատահում իրենց միջավայրում: Անխոս, այստեղ ևս մշակութային առանձնահատկություններն ունեն իրենց ազդեցությունը: Օրինակ՝ ակադեմիական անբարեվարքության դրսևորումներից ուսանողի վրա ձայն բարձրացնելը չի գիտակցվում որ-

պես ակադեմիական անբարեվարքություն, այլ հոգատարություն ուսանողի համար կամ միակ սաստող միջոցը ուսանողի կողմից անբարեվարք պահվածքի դեպքում: Վերջինիս համատեքստում մասնակիցները նշում են, որ հարկավոր է բարձրացնել դասախոսի արժեքը և հանրային կարգավիճակը, այդ թվում՝ ՀՀ կառավարության միջամտությամբ, որը ևս թույլ կտա խուսափել ուսանողների կողմից անբարեվարք դրսևորումներից:

Ակադեմիական անբարեվարքությունից մասնակիցները նշում են գրագողությունը, անազնվությունը, մասնագիտական անպատրաստվածությունը և գործատուի կողմից նմանատիպ երևույթի հանդեպ հանդուրժողականությունը:

Չնայած բուհերի մեծամասնությունում էթիկայի կանոնակարգի առկայությանը՝ ըստ հարցվածների այն ևս հռչակագրային է և գործնականում չի կիրառվում: Ավելին, մասնակիցների համոզմամբ, էթիկայի կանոնակարգերը պետք է վերանայվեն և ավելի հստակ ձևակերպեն արժեքները, պատասխանատվությունները և իրագործման մեխանիզմները:

Այսպիսով՝ *ակադեմիական բարեվարքության վերաբերյալ պատկերացումները մասամբ համահունչ են Ակադեմիական բարեվարքության եվրոպական ցանցի ձևակերպմանը, սակայն բարեվարքություն հասկացությունն ավելի շատ կիրառվում է միջանձնային հարաբերությունների համատեքստում, քան օրինակ՝ հետազոտությունների իրականացման: Այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ պատասխանատվությունը հետազոտության հուսալիության, հետազոտության հավաստի մեթոդաբանության կիրառման, հեղինակային իրավունքի և բարեվարք հետազոտությանը վերաբերող այլ հասկացություններ չեն բարձրաձայնվում հարցվածների կողմից, ուստի՝ չեն դիտարկվում որպես հետազոտական բարեվարքության մաս:*

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ
Ակադեմիական ազնվություն

Հարցմանը մասնակցած բուհերից մեծամասնությունն ունի մշակված փաստաթուղթ/կարգավորում ակադեմիական ազնվության վերաբերյալ: Սակայն, ինչպես այլ դեպքերում, վերջիններս կրում են խիստ ֆորմալ բնույթ և գործնականում չեն իրագործվում: Ակադեմիական ազնվությունը բուհական հանրության կողմից ընկալվում է որպես դասախոսի օրինապահ լինելը, առանց կեղծիքի և խաբեության, թափանցիկ աշխատելը, հարգալից և ազնիվ լինելը միմյանց նկատմամբ:

Հարկ է ընգդծել, որ հարցվածները ակադեմիական ազնվությունը դիտարկում էին որպես անհատական արժեհամակարգի առկայության արդյունք կամ փոքր համայնք լինելու հանգամանքով, որտեղ «ամոթ» է այս կամ այն անազնիվ դրսևորումը: Սակայն, ոչ միշտ է, որ մասնակիցներն ակադեմիական ազնվությունը դիտարկում էին որպես պատասխանատվություն՝ հանրօգուտ մասնագետ պատրաստելու և քաղաքացի ձևավորելու առաքելությամբ:

Ուսումնասիրության մասնակիցները որպես ակադեմիական անազնվության ձևեր հստակ առանձնացնում են գրագողությունը և արտագրությունը, ընդ որում՝ շեշտելով, որ ուսանողները հաճախ ավելի շատ են դիմում անազնվության, քան դասախոսները: Այս երկու դրսևորումների ակնհայտ առկայության մասին է խոսում նաև բուհական համայնքի կողմից դրանց ու ակադեմիական անազնվության զուգադրումը:

Հարցման մասնակիցներն առանձնացնում են ակադեմիական անազնվության դեմ պայքարի մի քանի ձևեր՝ մեծամասամբ մատնանշելով իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացման, արժեհամակարգի ձևավորման անհրաժեշտությունը: Ուսա-

նողների կարծիքով անազնվության դեմ պայքարը պետք է սկսել վաղ տարիքից՝ դեռևս դպրոցից, իսկ համալսարանում պետք է գործեն պատժիչ մեխանիզմներ:

Հետաքրքիր է, որ այնպիսի ակադեմիական անազնվության դրսևորումներ, ինչպիսիք են՝ կաշառք տալը, խաբելը, այլոց աշխատանքը որպես սեփական աշխատանք ներկայացնելը առանձնակի քննության առարկա չեն դառնում բուհական համայնքի կողմից՝ դրանք արձանագրվելով կամ որպես մասնակի դեպքեր, որոնք արմատացած չեն բուհերում, կամ էլ, եթե, այնուամենայնիվ, տարածված են, այդ մասին չեն բարձրաձայնում: Սա հիմնականում պայմանավորված է մշակութային առանձնահատկություններով, իսկ նմանատիպ դեպքերի ազդարարումն ընկալվում է որպես մատնություն և պարսավելի է հանրության կողմից: Մշակութային առանձնահատկություններով և փոքր համայնք լինելով պայմանավորված՝ հաճախ կարելի է հանդիպել հովհանավորչության, հատկապես՝ գնահատման գործընթացում, ինչպես նաև արտագրություն և աջակցություն գործընկերոջը, որը հիմնականում չի դիտարկվում որպես ակադեմիական անազնվություն:

Ըստ մասնակիցների՝ վերոնշյալ դրսևորումների պատճառները շատ են, սակայն կարելի է առանձնացնել հիմնականում ցածր վարձատրությունը, անբարեխիղճ վերաբերմունքը, իրազեկվածության պակասը, ուսումնական գործընթացի ոչ արդյունավետ կազմակերպումը և գնահատման համակարգի թերությունները, գրագողության վերաբերյալ դասընթացների պակասը՝ հատկապես բարձրագույն կրթության առաջին մակարդակի կրթական ծրագրերում, դասընթացի ընթացքում ուսանողի մոտ քննողական մտածելակերպի դրսևորումների ներկայացումը չխթանող միջավայրը: Մասնակիցների համոզմամբ՝ ստեղծված իրավիճակը կարելի է բարելավել դասախոսների և ուսանողների ակտիվ երկխոսության, բուհական համայնքի իրազեկվածության բարձրացման, առանձին դասընթացների և աշխատաժողովների կազմակերպման միջոցով: Ըստ նրանց՝ կարևոր է նաև այդ աշխատաժողովներին բուհական լայն հանրության մասնակցությունը, այլապես գիտելիքը հիմնականում պտտվում է նույն շրջանակում,

որը խոչընդոտում է համապատասխան «ազնվության վրա հիմնված» մշակույթի ձևավորմանը: Ավելին, անհրաժեշտ է «խոսքերից անցում կատարել մեխանիզմների մշակմանը, իսկ այնուհետև՝ դրանց իրագործմանը»:

Հարցվածները, այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ նյութերի գողությունը կամ գրառումների կեղծումը, չեն հիշատակում որպես ակադեմիական անազնվության դրսևորում, քանի որ նմանատիպ դրսևորումները քիչ են հանդիպում առօրյա գործունեությունում:

Այսպիսով՝ *ակադեմիական ազնվության վերաբերյալ ընկալումները թույլ են տալիս եզրահանգել, որ, չնայած գործող կանոնակարգերի, այնուամենայնիվ առկա են գրագողության և արտագրության դեպքեր, որոնց դեմ պայքարը հիմնականում թողնված է անհատների բարեվարքության դրսևորմանը, և այդ կանոնակարգերը լայնորեն չեն կիրառվում: Ակադեմիական ազնվության և անազնիվ դրսևորումների ընկալումները հիմնականում ձևավորված են իրենց փորձառության շուրջ, և երբեմն որոշ անազնիվ դրսևորումները չեն հիշատակվում կամ դրանց սակավության, կամ մշակութային առանձնահատկություններով պայմանավորված:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 | Estermann, Thomas, Terhi Nokkala and Steinel Monika. 2011. "University Autonomy in Europe II - The Scorecard." November 08 Report of the European University Association.

2 | Estermann, Thomas and Enora Bennetot Pruvot. 2017. "University Autonomy in Europe III - The Scorecard." Report of the European University Association.

3 | Marginson, Simon. 2013. "Emerging higher education in the post-Confucian heritage zone." In D. Araya & P. Marber (Eds.), Higher education in the global age: Education policy, practice and promise in emerging societies (pp. 89–112). New York, NY: Routledge, p. 107.

4 | Thorens, J. (2006) 'Liberties, freedom and autonomy: A few reflections on academia's estate', Higher Education Policy 19(1): 87–110.

5 | Cary Nelson (AAUP president), "Defining Academic Freedom" Inside Higher Education (Dec. 21, 2010). Accessed January 28, 2018.

6 | European Network for Academic Integrity (ENAI), 2018. Glossary, Definition of academic ethics by Maira Chiera, August 13, 2018. Ակադեմիական բարեվարքության եվրոպական ցանց, 2018, http://www.academicintegrity.eu/wp/glossary/academic-integrity/

7 | Vaux D.L. (2016) Scientific Misconduct: Falsification, Fabrication, and Misappropriation of Credit. In: Bretag T. (eds) Handbook of Academic Integrity. Springer, Singapore. https://doi.org/10.1007/978-981-287-098-8_26

8 | William J. Bowers, "Student Dishonesty and Its Control In College", Bureau of Applied Social Research,Columbia University, 1964

9 | Donald L. McCabe, Linda Trevino, Kenneth Butterfield, "Cheating in Academic Institutions: A Decade of Research", Ethics and Behaviour, 11(3), p. 219-232; McCabe, D. L., & Treviño, L. K. (1997). Individual and contextual influences on academic dishonesty: A multicampus investigation, Research in Higher Education, 38, 379–396; McCabe, D. L., Treviño, L. K., & Butterfield, K. D. (1996). The influence of collegiate and corporate codes of conduct on ethics-related behavior in the workplace, Business Ethics Quarterly, 6, 461–476.

10 | Fishman T., 2014. "The Fundamental Values of Academic Integrity". The Second Edition licensed by the International Center for Academic Integrity. Clemson University. https://www.academicintegrity.org/wp-content/uploads/2017/12/Fundamental-Values-2014.pdf

11 | Անտոնյան Քրիստինե, «Ակադեմիական անազնվության դրսեւորումները ՀՀ բուհական համակարգում», Բաց հասարակության հիմնադրամներ, 2013: https://www.researchgate.net/publication/331231466_Akademiakan_anaznvutyan_drsevorumner_HH_buhakan_hamakargum

12 | Bretag, Tracey. Handbook of Academic Integrity. Springer-Verlag Singapur, January 2016.

13 | European Science Foundation & ALLEA (ALL European Academies). (2011). The European code of conduct for research integrity. http://www.esf.org/fileadmin/Public_documents/Publications/Code_Conduct_ResearchIntegrity.pdf

14 | InterAcademy Council/IAP – The Global Network of Science Academies. (2012). Responsible conduct in the global research enterprise: A policy report. http://www. interacademies.net/File.aspx?id=19789

ՀՂՈՒՄԵՐ

1 | http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13144&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

2 | http://www.magna-charta.org/resources/files/the-magna-charta/english

3 | https://eua.eu/resources/publications/642:salamanca-convention-2001.html

4 | https://eua.eu/resources/publications/638:graz-declaration-2003.html

5 | https://eua.eu/resources/publications/619:lisbon-declaration.html

6 | https://eua.eu/resources/publications/616:prague-declaration-2009.html

7 | https://rm.coe.int/global-forum-declaration-global-forum-final-21-06-19-003-/16809523e5

8 | https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000113234

9 | https://doi.org/10.1016/j.sbspro.2011.03.009

10 | https://www.oah.org/about/governance/policies/academic-freedom-guidelines-and-best-practices/

11 | https://www.aaup.org/file/1940%20Statement.pdf

12 | https://iau-aiu.net/IMG/pdf/academic_freedom_policy_statement.pdf

13 | https://www.insidehighered.com/views/2010/12/21/defining-academic-freedom

14 | https://www.academicintegrity.org

15 | AISP (Academic Integrity Standards Project). (n.d.). Home: Overview of the project. https://sites.google.com/site/academicintegrityresources/standards-project Accessed 6 Aug 2014.

16 | https://wcrif.org/documents/327-singapore-statement-a4size/file

17 | https://ori.hhs.gov

18 | https://ombudsman-fuer-die-wissenschaft.de

19 | https://ufm.dk/en/research-and-innovation/councils-and-commissions/The-Danish-Committee-on-Research-Misconduct

20 | https://www.daytonastate.edu/academicintegrity/academicdishonesty.html | https://www.missouristate.edu/academicintegrity/types-of-academic-dishonesty.htm | https://www.niu.edu/academic-integrity/students/types/index.shtml

21 | http://etico.iiep.unesco.org/sites/default/files/Ethics_Guidelines_FinalDef_08.02.13.pdf

22 | https://www.coe.int/en/web/education-minister-%20conference/previous-conferences, accessed 5 September 2016.

23 | https://www.coe.int/en/web/ethics-transparency-integrity-in-education/publications

«ԷԿՍԵՈ» ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

ստեղծվել է 2017 թվականին որպես այլընտրանքային հարթակ՝ բարձրագույն կրթության համակարգում փոփոխություն բերող, քննադատական և ստեղծարար միտք ունեցող և դրանք զարգացնող մասնագետների համար: Այն միտված է բարձրագույն կրթություն համակարգում համագործակցության խթանմանը, մասնագիտական զարգացմանը և ուղղորդմանը, խորհրդատվությունների իրագործմանը, կրթության, հետազոտության և նորարարությունների կապի ամրապնդմանը՝ խթանելով դիտարկող, հետազոտող, ստեղծագործող մտքի զարգացումը:

«ԷԿՍԵՈ»
կրթության և կարիերայի զարգացման հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, 0054, 43 Դավթաշեն IV թաղ.
www.exheo.com
exheofund@gmail.com